

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատված է

Գորիսի պետական համալսարանի

գիտական կրթության մասնաճյուղում

Ռեկտոր  Տի. Ա. Սաֆարյան

« 2011 » թ.



ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՌԿԱ ՌԻՍՈՒՑՄԱՄԲ

ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգի իրավական հիմքերն են՝ «Կրթության մասին», «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքները, ՀՀ Կրթության և Գիտության նախարարի կողմից հաստատված «ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգ»-ը, ԳՊՀ կանոնադրությունը և այլ իրավական ակտեր:

2. ԳՊՀ մագիստրատուրա մրցութային կարգով կարող են ընդունվել ՀՀ պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող անձինք: Օտարերկրյա բուհերի շրջանավարտների ընդունելությունը մագիստրատուրա կատարվում է հարցազրույցի և գիտական խորհրդի կարծիքի հիման վրա:

3. Մագիստրատուրայի ընդունելությունը կազմակերպելու նպատակով կազմվում է ընդունող հանձնաժողով՝ ռեկտորի նախագահությամբ, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի, ուսումնամեթոդական վարչության պետի, ֆակուլտետի դեկանների անդամակցությամբ: Ռեկտորի հրամանով ձևավորվում է մանդատային հանձնաժողով՝ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի նախագահությամբ, ուսումնամեթոդական վարչության պետի, համապատասխան ֆակուլտետների դեկանների անդամակցությամբ: Քննությունների անցկացման համար ռեկտորի հրամանով ձևավորվում են առարկայական քննական հանձնաժողովներ:

4. Մագիստրատուրայի ընդունելությունը կատարվում է 3 փուլով.

4.1. Առաջին փուլում անվճար և վճարովի համակարգ կարող են դիմել ԳՊՀ բակալավրիատի տվյալ մասնագիտության ընթացիկ ուստարվա այն շրջանավարտները, որոնք ավարտական աշխատանքի պաշտպանությունից և ամփոփիչ ատեստավորման քննությունից ստացել են 56 կամ ավելի բարձր միավորներ, իսկ դիպլոմի հավելվածում գրանցված միջին որակական գնահատականը (ՄՈԳ) կազմում է նվազագույնը 56 միավոր: Ընդունելությունը կատարվում է նախորդող ուսումնառության դիպլոմի հավելվածում գրանցված ՄՈԳ-ով՝ մրցութային հիմունքներով:

Հավասար ՄՈԳ-ի պարագայում առաջնահերթության կարգով հաշվի են առնվում հետևյալ լրացուցիչ չափանիշները.

1. գերազանցության դիպլոմի առկայություն,

2. ավարտական աշխատանքի պաշտպանության և ամփոփիչ ատեստավորման քննության միավորների գումարը:

4.2. Երկրորդ փուլում վճարովի համակարգ կարող են դիմել ԳՊՀ (նաև 4.1. կետի պահանջները չբավարարելու դեպքում) և այլ պետական ու ըստ մասնագիտությունների հավատարմագրված ոչ պետական բուհերի ընթացիկ և նախորդ տարիների շրջանավարտները: Ընդունելությունը կատարվում է մրցութային հիմունքներով տվյալ մասնագիտության բակալավրի ամփոփիչ ատեստավորման քննական ծրագրին

համապատասխան անցկացված քննության արդյունքներով: Ընդունելության վերաբերյալ որոշումը կայացնում է ընդունող հանձնաժողովը՝ առարկայական քննական հանձնաժողովների ներկայացրած արձանագրությունների հիման վրա:

4.1 կետի պահանջները բավարարող դիմորդները վճարովի համակարգ ընդունվում են առանց ընդունելության քննության:

4.3. Երրորդ փուլում անվճար (բանակից զորացրված (ԲԶ) դիմորդների համար նախատեսված տեղերի շրջանակներում) համակարգ կարող են դիմել ԳՊՀ տվյալ մասնագիտությամբ բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի որակավորում ունեցող ՀՀ Ազգային բանակում ծառայած դիմորդները: Ընդունելությունը կատարվում է առանց քննության մրցութային կարգով՝ նախորդող ուսումնառության դիպլոմի հավելվածում գրանցված առարկաների ՄՈԳ-ի հիման վրա: Ընդունելության վերաբերյալ որոշումը կայացնում է ընդունող հանձնաժողովը՝ մանդատային հանձնաժողովի երաշխավորության հիման վրա:

Անվճար համակարգի մրցույթից դուրս մնացած ՀՀ Ազգային բանակում ծառայած դիմորդները վճարովի համակարգ ընդունվում են առանց ընդունելության քննության:

Մասնագիտության փոփոխման պարագայում ԳՊՀ շրջանավարտների կամ այլ ԲՈՒՀ-երի շրջանավարտների ընդունելությունը կատարվում է միայն վճարովի համակարգում՝ տվյալ մասնագիտության բակալավրի ամփոփիչ ատեստավորման ծրագրին համապատասխան անցկացված քննության արդյունքներով: Ընդունելության վերաբերյալ որոշումը կայացնում է ընդունող հանձնաժողովը՝ առարկայական քննական հանձնաժողովների ներկայացրած արձանագրությունների հիման վրա:

Երրորդ փուլով մագիստրատուրայի վճարովի համակարգ կարող են դիմել նաև առաջին և երկրորդ փուլում ժամանակին չդիմած անձինք: Առաջին փուլի պահանջներին բավարարող դիմորդները վճարովի համակարգ են ընդունվում առանց ընդունելության քննության:

5. Դիմորդները ներկայացնում են հետևյալ փաստաթղթերը.

- մագիստրատուրայի ընդունելության դիմում-հայտ,
- բարձրագույն կրթության դիպլոմի և նրա հավելվածի բնագրերն ու պատճենները,
- 4 լուսանկար (3x4 չափսի),
- զինվորական գրքույկի բնագիրն ու պատճեն (առկայության դեպքում),

6. Ընդունելության փաստաթղթերն ընդունվում են՝ 1-ին փուլով՝ մայիսի 21-ից մինչև հունիսի 4-ը, 2-րդ փուլով՝ հունիսի 11-ից մինչև օգոստոսի 25-ը, 3-րդ փուլով՝ օգոստոսի 26-ից մինչև օգոստոսի 30-ը:

7. Մագիստրատուրայի վճարովի համակարգ ընդունված դիմորդների հրամանագրումը կատարվում է ուսման վարձը վճարելուց հետո: